Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի <<Վարդավանքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ –ի ռուսաց լեզվի (9 դասաժամ), անգլերենի (8 դասաժամ), երաժշտության (1 դասաժամ), կերպարվեստի(1դասաժամ), քիմիայի (3,25 դասաժամ), ֆիզկուլտուրայի (7.5 դասաժամ), հասարակագիտության (3դասաժամ), հայոց եկեղեցու պատմության (2 դասաժամ), պատմության (6,25դասաժամ), աշխարհագրության (3,25), տեխնոլոգիայի տղաների խումբ (1դասաժամ), հայոց լեզվի և գրականության (7,75 դասաժամ), մայրենիի (10 դասաժամ) թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝նաև զինվորական գրքույկ:
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերը ընդունվում են 2023թ. օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի սեպտեմբերի 14–ին ժամը 14:00-ին ՀՀ Սյունիքի մարզի Վարդավանքի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գյ.Վարդավանք, թաղամաս 1, շենք 15: Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 45-57-08 հեռախոսահամարով: